24715

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՍ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

331.88(47)
Հ-22

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ● 1940

15 JAN 2010

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

331.88(47)
Հ-22

# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՍ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1940

24715

01 JUN 2013

ОБ ОТЧЕТАХ И ВЫБОРАХ ФАБРИЧНЫХ, ЗАВОДСКИХ И МЕСТНЫХ КОМИТЕТОВ ПРОФСОЮЗОВ

ПОСТАНОВЛЕНИЕ ПРЕЗИДИУМА ВЦСПС

Государственное издательство политической литературы
Ереван 1940

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1307 – 93 Է

# ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄԿՍ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

*1. Պրոֆմիությունների ֆաբրիկային, գործարանային և տեղական կոմիտեների լիազորությունների ժամկետն անցնելու հետևանքով 1940 թվականի հոկտեմբեր–նոյեմբերին անցկացնել ֆաբրիկա–գործարանային և տեղական կոմիտեների, ինչպես նաև ցեխային կոմիտեների և պրոֆմիութենական խմբակների կազմակերպիչների (պրոֆխմբկազմակերպիչներ) հաշվետվություններ և ընտրություններ:*

*2. Պրոֆմիությունների ֆաբրիկային, գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները պետք է կատարվեն Սովետական Միության*

տնտեսական ու պաշտպանական հզորության հետագա ամրապնդման, սոցիալիստական մրցումն ու ստախանովյան շարժումը ծավալելու, աշխատանքի արտադրողականության հետագա աճման և սոցիալիստական աշխատանքային դիսցիպլինան ամրացնելու համար, գործալքումները վերացնելու և ձեռնարկություններից ու հիմնարկներից բանվորների և ծառայողների ինքնակամ հեռացման դեմ պայքարելու համար պրոֆմիությունների անդամների լայն մասսաներին մոբիլիզացիայի ենթարկելու նշանաբանով:

3. Պարտավորեցնել պրոֆմիութենական օրգաններին հաշվետու-ընտրական ժողովներում ապահովելու բոլշևիկյան քննադատության և ինքնաքննադատության ծավալումը, պրոֆմիութենական օրգանների աշխատանքում եղած թերությունների հայտաբերումն ու վերացումը և ֆաբրիկա-գործարանային ու տեղական կոմիտեների կազմի մեջ բանվոր դասակարգի և սովետական ինտելիգենցիայի լավագույն մարդ-



կանց առաջքաշումը, որոնք նվիրված են Լենինի—Ստալինի պարտիայի գործին, ընդունակ են ՀԱՄԿՍ X պլենումի որոշումների հիման վրա արագորեն վերացնելու պրոֆմիութենական ապարատի թերությունները և բարելավելու պրոֆմիութենական օրգանների աշխատանքը:

4. Սահմանել, որ ձեռնարկության մեջ, հիմնարկում ցեխային կոմիտեների և պրոֆխմբակային կազմակերպիչների հաշվետվություններն ու ընտրությունները պետք է սկսվեն ոչ ուշ, քան ֆաբրիկային, գործարանային և տեղական կոմիտեի ընտրությունները վերջանալուց 5 օր հետո:

5. Առաջարկել պրոֆմիութենական օրգաններին ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարել ոչ-աշխատանքային ժամանակ ըստ հերթափոխերի և թույլ չտալ աշխատանքի մեջ գտնվողների փոխարինում ի հաշիվ ուրիշ հերթերում աշխատողների:

6. Հաստատել ֆաբրիկային, գործա-

րանային և տեղական կոմիտեների հաշվետվությունների և ընտրությունների կատարման ժամկետներն ըստ պրոֆմիությունների:

7. Հաստատել «Պրոֆմիութենական օրգանների ընտրությունների հրահանգը» (տե՛ս հավելվածը):

8. Հաստատել ֆաբրիկային, գործարանային, տեղական և ցեխային կոմիտեների ու պրոֆխմբակային կազմակերպիչների հաշվետվությունների և ընտրությունների վերաբերյալ օպերատիվ հաշվետվության ձևը:

9. Առաջարկել «Труд» լրագրի խմբագրությանը, ֆաբրիկա-գործարանային բազմատիրաժ լրագրերին և պրոֆմիութենական մամուլի բոլոր օրգաններին լայնորեն լուսաբանել ֆաբրիկա-գործարանային, տեղական և ցեխային կոմիտեների ու պրոֆխմբակային կազմակերպիչների հաշվետվություններն ու ընտրությունները:



# ՀՐԱՀԱՆԳ

## ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Պրոֆմիութենական օրգանների ընտրությունների ժամանակ ցուցակով քվեարկությունն արգելվում է: Քվեարկությունը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածությունների, ընդորում պրոֆմիությունների բոլոր անդամներին անսահմանափակ իրավունք է վերապահվում բացարկելու թեկնածուներին և քննադատելու նրանց: Ընտրությունները կատարվում են թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկությամբ:

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.

ա) ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները, ցեխային կոմիտեները, պրոֆմիութենական խմբակների կազմակերպիչները (պրոֆխմբկազմակերպիչներ).

բ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային և ռես-

պուբլիկական կոնֆերենցիաների և համագումարների դելեգատները.

գ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտենրը.

դ) պրոֆմիութենական օրգանների վերստուգիչ հանձնաժողովները:

3. Համապատասխան կոմիտեների պլենումներում բաց քվեարկությամբ ընտրվում են.

ա) ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների նախագահներն ու տեղակալները և ցեխային կոմիտեների նախագահները.

բ) պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային, ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտենրի նախագահներն ու քարտուղարները.

գ) պրոֆմիությունների ռեսպուբլիկական և կենտրոնական կոմիտեների նախագահությունները.

դ) վերստուգիչ հանձնաժողովների նա-



խագահները—վերստուգիչ հանձնաժողովների նիստերում:

4. Պրոֆմիութենական օրգանների ընտրությունները ձեռնարկություններում, հիմնարկներում, ուսումնական հիմնարկներում կատարվում են հետևյալ կարգով. նախ ընտրվում են ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները, վերստուգիչ հանձնաժողովները, իսկ հետո ցեխային կոմիտեներն ու պրոֆխմբակային կազմակերպիչները:

5. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները ոչ ուշ, քան հաշվետու-ընտրական ժողովից 10 օր առաջ պրոֆմիության անդամներին տեղեկացնում են ֆաբրիկա-գործարանային, տեղական կոմիտե ընտրությունները կատարելու օրվա և կարգի մասին:

Հաշվետու-ընտրական ժողովը բացում է համապատասխան պրոֆմիութենական օրգանի ներկայացուցիչը, այսինքն՝ ձեռնարկության կամ հիմնարկի պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովը բա-

ցում է ֆաբրիկա-գործարանային կամ տեղական կոմիտեի ներկայացուցիչը, ցեխի պրոֆմիության անդամների ժողովը՝ ցեխային կոմիտեի ներկայացուցիչը, պրոֆմիութենական խմբակի ժողովը՝ պրոֆխմբակի կազմակերպիչը:

Հաշվետու-ընտրական ժողովը վարելու համար բաց քվեարկությամբ ընտրվում է նախագահություն: Նախագահության անդամների թիվը որոշում է ինքը ժողովը: Նախագահության կազմի թեկնածությունները առաջադրվում են հենց ժողովում:

6. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ձեռնարկությունների, հիմնարկների, ուսումնական հաստատությունների պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովներում:

Այն դեպքերում, երբ արտադրության պայմանների բերումով (արտադրության անընդհատություն, բազմահերթություն) անկարելի է հրավիրել պրոֆմիության անդամների ընդհանուր ժողով, յուրաքան-



չյուր առանձին դեպքում համապատասխան պրոֆմիության կենտրոնական կոմիտեի թույլտվությամբ ֆաբրիկա-գործարանային կոմիտեի հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են հերթափոխային կամ ցեխային ժողովներում:

7. Ցեխային կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ցեխի պրոֆմիության անդամների ժողովներում: Այն դեպքերում, երբ արտադրության պայմանների բերումով անկարելի է հրավիրել ցեխի պրոֆմիության անդամների ժողով, ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեի թույլտվությամբ պրոֆմիության անդամների ժողովները գումարել ըստ հերթերի:

8. Պրոֆխմբակային կազմակերպիչների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են պրոֆխմբակների ժողովներում:

9. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ոչ-աշխատան-

քային ժամանակ ըստ հերթափոխերի, և չի թույլատրվում աշխատանքի մեջ գտնվողների փոխարինում ի հաշիվ ուրիշ հերթերում աշխատողների:

10. Պրոֆմիության անդամների հաշվետու-ընտրական ժողովները իրավազոր են համարվում այն դեպքում, եթե ներկա է ընտրությունների ժամանակաշրջանում ձեռնարկության մեջ, հիմնարկում աշխատող՝ պրոֆմիության անդամների առկա կազմի ոչ պակաս, քան $^2/_3$-ը, այսինքն՝ բացառությամբ հիվանդների և նրանց, ովքեր գտնվում են հերթական արձակուրդում, գործուղման մեջ և այլն:

11. Պրոֆմիութենական օրգանների և վերստուգիչ հանձնաժողովների ընտրությունները կատարվում են համապատասխան պրոֆօրգանի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումը ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի կողմից լսելուց, քննելուց և որոշում ընդունելուց հետո:

Պրոֆմիութենական օրգանների հաշվետվությունները նախապես քննվում են պրոֆմիությունների համապատասխան կոմիտեների նիստերում: Պրոֆմիությունների կոմիտեների նիստերում հաշվետու զեկուցումների սկզբնական քննությունը այդ պրոֆօրգանների անդամներին չի զրկում պրոֆմիության անդամների նիստերում, կոնֆերենցիաներում, համագումարներում պրոֆմիութենական կազմակերպության ղեկավարության քննադատությամբ հանդես գալու իրավունքից:



12. Ընտրությունները կատարելուց առաջ ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը սահմանում է միության համապատասխան կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմի անդամների քանակը:

13. Պրոֆմիութենական օրգանի նոր կազմի թեկնածությունները առաջադրվում են պրոֆմիության անդամների ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում:

Պրոֆմիության յուրաքանչյուր անդամի, ով ցանկանում է այս կամ այն թեկ-

նածությունն առաջադրել պրոֆմիութենական օրգանի կազմի մեջ, ժողովի նախագահությունը խոսք է տալիս առաջարկ անելու թեկնածության վերաբերյալ և այդ առաջարկը հիմնավորելու համար:

Այն դեպքում, երբ առաջարկ ստացվի դադարեցնելու թեկնածություններ առաջադրելը համապատասխան պրոֆօրգանի համար, ժողովի նախագահությունը այդ առաջարկը պետք է դնի ընդհանուր ժողովի, կոնֆերենցիայի կամ համագումարի քննությանը և բաց քվեարկությամբ վճռի այն հարցը՝ շարունակել, թե դադարեցնել նոր թեկնածությունների գրանցումը ընտրվող պրոֆօրգանի կազմի համար:

14. Այն պրոֆկազմակերպություններում, որտեղ ֆաբրիկա-գործարանային կոմիտեի հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են հերթափոխային կամ ցեխային ժողովներում, ֆաբրիկա-գործարանային կոմիտեի հաշվետվությունը քննելուց և հաշվետվության առթիվ որոշում ընդունելուց հետո ցեխային կամ հերթափո-



խային ժողովներում բաց քվեարկությամբ ընտրվում են լիազոր անձեր՝ պրոֆմիության 25—50 անդամին մի լիազոր նորմայով:

Լիազորների խորհրդակցությունը նախապես նշում է ֆաբրիկա-գործարանային կոմիտեի կազմի թեկնածությունները: Լիազորների խորհրդակցությունը գումարում է ֆաբրիկա-գործարանային կոմիտեն:

Լիազորների խորհրդակցության նախատեսած թեկնածությունները ցեխային կամ հերթափոխային ժողովներում առաջադրվում են լիազորների խորհրդակցության անունից և անհատապես, ընդհանուր կարգով, քննվում են այդ ժողովներում:

Ֆաբրիկա-գործարանային կոմիտեի նոր կազմի համար լիազորների խորհրդակցությունում նախապես թեկնածություններ նշելը չի սահմանափակում պրոֆմիության անդամների իրավունքները ժողովներում թեկնածություններ նշելիս և քննարկելիս:

Լիազորների խորհրդակցության առաջադրածներից զատ որևէ ցեխային կամ

հերթափոխային ժողովում առաջադրված թեկնածությունները պետք է քննվեն հետագա բոլոր հերթափոխային, ցեխային ժողովներում և այդպիսի քվեարկության համար կազմված ցուցակների մեջ մտցվում են միայն նրանց թեկնածությունները, ովքեր առաջադրված են ձեռնարկության մեջ աշխատող պրոֆմիության անդամների ոչ պակաս, քան կեսի կողմից:

15. Պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, երկրային և ռեսպուբլիկական կոնֆերենցիաներում ու համագումարներում, կոնֆերենցիայի կամ համագումարի նախագահության որոշմամբ, կարող են հրավիրվել դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցություններ պրոֆմիութենական օրգանի նոր կազմի համար նախապես թեկնածություններ նշելու նպատակով:

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության նախատեսած թեկնածությունները կոնֆերենցիայի կամ համագումարի նախագահության նիստում առա-



6874
1301-93

ջադրվում են այդ խորհրդակցության անունից և անհատապես, ընդհանուր կարգով, քննվում են կոնֆերենցիայի, համագումարի նիստում:

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության մեջ պրոֆմիութենական օրգանի նոր կազմի համար նախապես թեկնածուներ նշելը չի սահմանափակում դելեգատների իրավունքները կոնֆերենցիայում, համագումարում իսկ թեկնածություններ նշելիս և քննելիս:

16. Պրոֆմիութենական օրգանի կազմի համար առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը կատարվում է այն կարգով, ինչպես նրանք գրանցված են՝ ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահության մոտ դրանց ստացվելու հաջորդականությամբ:

Թեկնածություններն անհատապես քննարկելիս պետք է ապահովվի պրոֆմիութենական օրգանի կազմի մեջ առաջադրված թեկնածությունները բացարկելու անսահմանափակ իրավունքը, այսինքն՝ ժողովի



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР

յուրաքանչյուր մասնակից կարող է բացարկել ուզած քանակությամբ առաջադրված թեկնածություններ; և յուրաքանչյուր առաջադրված թեկնածության առթիվ կարող են անսահմանափակ քանակությամբ պրոֆմիության անդամներ արտահայտվել ինչպես «թեր», այնպես էլ «դեմ»:

Այս կամ այն թեկնածության քննարկումը դադարեցնելու վերաբերյալ առաջարկ ստացվելու դեպքում նախագահությունն այդ առաջարկը դնում է ընդհանուր ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի քննությանը և բաց քվեարկությամբ վճռում տվյալ թեկնածության քննությունը դադարեցնելու կամ շարունակելու հարցը:

17. Այն թեկնածությունները քննարկելուց հետո, որոնց դեմ բացարկներ են ստացված, անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվեարկությամբ վճռել տվյալ թեկնածությունն այն ցուցակի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը, որ կազմվում է փակ (գաղտնի) քվեարկու-



թյամբ պրոֆմիութենական օրգանի ընտրությունները կատարելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվել ինչպես «բացարկմանը թեր», այնպես էլ «բացարկմանը դեմ» տրված բոլոր ձայները:

Իսկ այն թեկնածությունների վերաբերմամբ, որոնց դեմ բացարկ չի ստացվել, բաց քվեարկություն չի կատարվում և այդ թեկնածությունները մտցվում են փակ (գաղտնի) քվեարկության համար կազմված ցուցակի մեջ:

Թեկնածությունները ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում քննարկելուց հետո փակ (գաղտնի) քվեարկության ներկայացվող ցուցակների ճշտության համար պատասխանատու է ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահությունը: Նախագահությունը պարտավոր է մանրամասն ստուգել գրանցումների ճշտությունը կազմված ցուցակում:

18. Փակ (գաղտնի) քվեարկությունից առաջ պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան, համագու-

մարը բաց քվեարկությամբ ընտրում է հաշվիչ հանձնաժողով փակ (գաղտնի) քվեարկության արդյունքները հաշվելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամների քանակը որոշում է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան, համագումարը: Հաշվիչ հանձնաժողովի անդամներն ընտրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահ:

Այն ձեռնարկություններում ու հիմնարկներում, որտեղ ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների ընտրությունները կատարվում են ցեխային և հերթափոխային ժողովներում, համագործարանային հաշվիչ հանձնաժողովը կազմվում է այն ներկայացուցիչներից, որոնք ընտրված են հաշվիչ հանձնաժողովի մեջ պրոֆմիության անդամների ցեխային, հերթափոխային ժողովներում: Այս դեպքերում հաշվիչ հանձնաժողովի անդամների ընդհանուր քանակը և ցեխից կամ հերթափոխությունից այդ հանձնաժողովի մեջ մտած



ներկայացուցիչների քանակը սահմանում է լիագորների խորհրդակցությունը:

Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահը (իսկ այն ձեռնարկություններում, որտեղ ընտրությունները կատարվում են ցեխային-հերթափոխային ժողովներում, հաշվիչ հանձնաժողովի անդամը) պարտավոր է բացատրել պրոֆմիության անդամների ժողովին, կոնֆերենցիայի, համագումարի դելեգատներին փակ (գաղտնի) քվեարկության կարգը:

Հաշվիչ հանձնաժողովը փակ (գաղտնի) քվեարկությունից առաջ պարտավոր է նախապատրաստել քվեատուփերը և անձամբ կնքել կամ փակել դրանք:

19. Հաշվիչ հանձնաժողովը ընտրական ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի յուրաքանչյուր մասնակցի, վերջինիս կողմից պրոֆմիութենական տոմսը կամ դելեգատային մանդատը ներկայացնելուց հետո, տալիս է մեկական օրինակ թեկնածությունների ցուցակ, որոնք նախատեսված են պրոֆմիութենական օրգանների

նոր կազմի համար, և ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի մասնակիցների ցուցակներում նշում է կատարում այն մասին, որ պրոֆմիության անդամը, դելեգատը մասնակցել է քվեարկությանը:

20. Փակ (գաղտնի) քվեարկությանը մասնակցում են միայն պրոֆմիության անդամները:

Պրոֆմիության ամեն մի անդամ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի ջնջելու առանձին թեկնածություններ և ավելացնելու նորերը, անկախ այն բանից, թե ինչ քանակությամբ է ժողովը, կոնֆերենցիան, համագումարը սահմանել ընտրել պրոֆմիութենական օրգանի նոր կազմը:

21. Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովը բացում է քվետուփերը և դրա համար հատկացված շենքում հաշվում քվեարկության արդյունքները:

Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվել առանձին-առանձին յուրաքանչյուր



թեկնածության «թեր» և «դեմ» բոլոր ձայները:

Ձայները հաշվելուց հետո հաշվիչ հանձնաժողովը արձանագրություն է կազմում, որի մեջ մտցնում է յուրաքանչյուր թեկնածության քվեարկության արդյունքներն առանձին-առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն շենքում, որտեղ հաշվում է կատարվում, ոչ ոք իրավունք չունի գտնվելու, բացի հաշվիչ հանձնաժողովի անդամներից:

22. Ընտրական ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում հաշվիչ հանձնաժողովը զեկուցում է յուրաքանչյուր թեկնածության քվեարկության արդյունքներն առանձին-առանձին:

Պրոֆմիութենական օրգանի կազմի մեջ ընտրված են համարվում այն թեկնածությունները, որոնք ստացել են ձայների մեծամասնություն մնացած քվեարկված թեկնածությունների հանդեպ և ժողովում,

նոր կազմի համար, և ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի մասնակիցների ցուցակներում նշում է կատարում այն մասին, որ պրոֆմիության անդամը, դելեգատը մասնակցել է քվեարկությանը:

20. Փակ (գաղտնի) քվեարկությանը մասնակցում են միայն պրոֆմիության անդամները:

Պրոֆմիության ամեն մի անդամ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի ջնջելու առանձին թեկնածություններ և ավելացնելու նորերը, անկախ այն բանից, թե ինչ քանակությամբ է ժողովը, կոնֆերենցիան, համագումարը սահմանել ընտրել պրոֆմիութենական օրգանի նոր կազմը:

21. Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովը բացում է քվետուփերը և դրա համար հատկացված շենքում հաշվում քվեարկության արդյունքները:

Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվել առանձին-առանձին յուրաքանչյուր



թեկնածության «թեր» և «դեմ» բոլոր ձայները:

Ձայները հաշվելուց հետո հաշվիչ հանձնաժողովը արձանագրություն է կազմում, որի մեջ մտցնում է յուրաքանչյուր թեկնածության քվեարկության արդյունքներն առանձին-առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն շենքում, որտեղ հաշվում է կատարվում, ոչ ոք իրավունք չունի գտնվելու, բացի հաշվիչ հանձնաժողովի անդամներից:

22. Ընտրական ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում հաշվիչ հանձնաժողովը զեկուցում է յուրաքանչյուր թեկնածության քվեարկության արդյունքներն առանձին-առանձին:

Պրոֆմիութենական օրգանի կազմի մեջ ընտրված են համարվում այն թեկնածությունները, որոնք ստացել են ձայների մեծամասնություն մնացած քվեարկված թեկնածությունների հանդեպ և ժողովում,

կոնֆերենցիայում ու համագումարում ներկա գտնվող՝ միության անդամների, կոնֆերենցիայի, համագումարի դելեգատների ձայների կեսից ավելին:

23. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածությունների ցուցակները, գրավոր հայտարարությունները, ձայների հաշվումը և այլն) պետք է պահպանվեն գաղտնի փաստաթղթերի իրավունքներով համապատասխան պրոֆմիութենական օրգաններում:

Ընտրական բյուլետենները պահվում են.

ա) պրոֆխմբակային կազմակերպիչների, ցեխկոմների, ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների ընտրությունների վերաբերյալ՝ երեք ամսվա ընթացքում:

բ) շրջկոմների, մարզկոմների, երկրկոմների, ռեսպուբլիկական կոմիտեների ընտրությունների վերաբերյալ՝ չորս ամսվա ընթացքում:

Հիշատակված ժամկետներն անցնելուց



հետո ընտրական բյուլետենները պետք է ոչնչացվեն, որի մասին 3 օրինակ ակտ է կազմվում համապատասխան պրոֆօրգանի և վերստուգիչ հանձնաժողովի անդամի ստորագրությամբ. ակտերը պետք է պահվեն համապատասխան պրոֆմիութենական օրգաններում գաղտնի փաստաթղթերի իրավունքներով:

*Թարգմ.* Մ. Զաքարյան
*Տեխն. խմբ.* Ս. Խաչատրյան
*Սրբագրիչ* Ա. Մանուկյան
*Կոնտրոլ սրբագրիչ* Լ. Աքովյան

---

*Հրատ.* № 844, *պատվեր* № 311, заказ № 311,
*Տիրաժ* 5000, тираж 5000,
*Հանձնվել է արտադրության* 18/X 1940 *թ.*
*Ստորագրվել է տպագրելու* 19/X 1940 *թ.*
*Գինը* 20 *կ.* цена 20 к.

---

*Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան* № 65
Типография Гос. изд. полит. литературы,
Ереван, Аллавердян № 65

---

*ՎՖ* 2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0204132

Գինը 20 կ.

ОБ ОТЧЕТАХ И ВЫБОРАХ ФАБРИЧНЫХ, ЗАВОДСКИХ И МЕСТНЫХ КОМИТЕТОВ ПРОФСОЮЗОВ

ПОСТАНОВЛЕНИЕ ПРЕЗИДИУМА ВЦСПС

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65